ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2017 թ.

№ 16 (1016)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Մանկավարժական համալսարանում կայացավ «Ներառական կրթության ոլորտում աշխատող մասնագետների պատրաստման և գործող մասնագետների վերապատրաստման դասընթացների հզորացում» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը:

ՀՊՄՀ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի իրականացրած համատեղ ծրագիրը մեկնարկել է դեռևս նախորդ տարի, նպատակը Սյունիքի մարզում ներառական կրթության ոլորտում աշխատող մասնագետների վերապատրաստումն ու որակավորման բարձրացումն էր:

Ծրագրի խնդիրներից էր նաև մարզում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա խնդիրների վերհանումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ցուցաբերվող բազմամասնագիտական աջակցության որակի՝ վերապատրաստումների և մասնագիտական գրականության տրամադրման միջոցով բարելավումը, ինչպես նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու համար խորհրդատվության մատուցումը:

Աշխատաժողովի ամփոփմանը ՀՊՄՀ պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը ծրագրի անցկացումը դրական գնահատեց և առաջարկեց հաջող փորձը տարածել այլ մարզերում ևս: Իսկ իրականացված աշխատանքների արդյունքների քննարկումն ու վերլուծությունը հետագայում կօգնեն նմանատիպ ծրագրի իրականացմանը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական ծրագրերի ղեկավար Ալվարդ Պողոսյանը նշեց. «Ծրագիրը մեզ համար շատ կարևոր էր, և մենք ուզում էինք, որ Մանկավարժական համալսարանը ևս այս մեծ գործընթացի մաս դառնա. ծրագիրը նպաստեց նաև դրան: Մենք հաճույքով արձանագրում ենք, որ մեծ աշխատանք է կատարվել, և այսօր արդյունքը տեսանելի է»:

Խոսելով ներառական կրթության ներդրման, հատուկ դպրոցների վերակազմավորման, մանկավարժահոգեբանական կենտրոնների մասին՝ Ա. Պետրոսյանն ընդգծեց, որ ոլորտի սահուն անցումը ներառականությանը պետք է ենթադրի մի շարք անհրաժեշտ քայլերի իրականացում:

➢ 3

ՀՊՄՀ կայքը՝ հաղթող

Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը կրթական և լրացուցիչ մասնագիտական հաստատությունների կայքերի՝ «Ինտերնետ-մրցույթ ԵԱՐՍ-2017» բաց մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն շարժական տարբերակ» անվանակարգում:

Հայտարարված 10 անվանակարգում՝ մրցույթին հայտ էր ներկայացրել Եվրասիական մանկավարժական ասոցիացիայի անդամ առաջատար 37 բուհ: Ի դեպ, Մանկավարժական համալսարանը մրցույթի մասնակից միակ հայկական բուհն է:

Տարբեր անվանակարգերում ստանալով բարձր միավորներ՝ ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքը՝ www.aspu.am-ը, մրցույթում զբաղեցրել է նաև պատվավոր 2-րդ հորիզոնականը՝ առաջատարի տեղը զիջելով միայն Կոզմա Մինինի անվան Նիժնի Նովգորոդի պետական մանկավարժական համալսարանին:

ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքը ստեղծվել է 2011 թվականի դեկտեմբերի 23-ին, իսկ 2016 թվականին վերագործարկվել է՝ կարևորելով ոլորտի ժամանակակից միտումներն ու աշխարհի առաջատար բուհերի լավագույն փորձը:

www.aspu.am-ը ժամանակակից մոտեցումներով արագագործ և ծավալուն կայք է՝ ընդլայնման և խորացման հնարավորություններով:

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Լիբանանյան-կանադական համալսարանի պատվիրակությունը, որի կազմում էին բուհի նախագահ Ռոնի Աբի Նախլեն, հոգաբարձուների խորհրդի նախագահ Յոլանդե Սալեմը, Լիբանանում Հայաստանի դեսպանատան մշակութային հարցերով խորհրդատու Միրեյ Խանամիրյանը:

ՀՊՄՀ-ի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը հյուրերի հետ հանդիպման ընթացքում վստահեցրեց, որ բուհը բաց է համագործակցության համար և պատրաստ քննարկելու դրան վերաբերող առաջարկները:

«Լիբանանյան-կանադական համալսարանը Միջին Արևելքի թոփ 10 համալսարանների շարքում է, հավատարմագրված է մի շարք կազմակերպությունների կողմից, ինչը շատ կարևոր է վարկանիշավորման համար: Այն համալսարան է, որի կրթական ծրագրերի 95 տոկոսը համատեղ են իրականացվում և տրվում համատեղ դիպլոմներ»,-նշեց Լիբանանյան-կանադական համալսարանի նախագահ Ռոնի Աբի Նախլեն, և հավելեց, որ առաջիկա ուսումնական տարում համալսարանը նախատեսում է բացել նաև Կրթության ֆակուլտետ:

Լիբանանցի հյուրերը հետաքրքրվեցին ՀՊՄՀ-ի՝ հատկապես սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք և էկոլոգիա մասնագիտությունների ուղղությամբ ուսանողների թվով, երկակի դիպլոմ շնորհելու, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակման հնարավորություններով:

ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը ներկայացրեց մանկավարժական բուհի գործունեությունը, ուղղությունները, միջազգային համագործակցության հաջողված փորձը, ինչպես նաև երկակի դիպլոմներ շնորհելու հնարավորությունները:

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ Կարինե Դանիելյանը ներկայացրեց համահամալսարանական ամբիոնի գործունեությունը և վստահեցրեց, որ այս մասնագիտությամբ ուսանողներն ստանում են լուրջ առարկայացանկ: Նա հույս հայտնեց, որ ամբիոնի և մասնագիտության գործունեությամբ հետաքրքրվող ուսանողների թիվը ժամանակի ընթացքում կմեծանա, քանի որ համաշխարհային մակարդակներում ևս կարևորված են էկոլոգիայի պահպանման և կայուն զարգացման հիմախնդիրները:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Արմեն Սահակյանն էլ առաջարկեց համագործակցության շրջանակներում նախատեսել նաև համատեղ գիտաժողովներ, վեբինարներ, մրցույթներ, ինչը կնպաստի երկու կողմերի գիտամանկավարժական գործունեությանը:

Հանդիպման ավարտին Լիբանանյան-կանադական համալսարանի նախագահը ևս մեկ անգամ ընդգծեց, որ բուհը բաց է գործընկերության համար և պատրաստ Մանկավարժական համալսարանի հետ արդյունավետ համագործակցության տարբեր առաջարկների համար:

Ֆրանկոֆոնիայի օր Օտար լեզուների ֆակուլտետում

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1970 թվականին, այն ֆրանսերենի և համընդհանուր արժեքների ամրագրման ու տարածման միջազգային հաստատություն է: Կազմակերպության ամենաբարձր քաղաքական մարմինը երկրների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովն է, որը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Մադագասկարի մայրաքաղաք Անտանանարիվուում տեղի ունեցած գագաթաժողովում որոշվել է, որ 2018 թվականի գագաթաժողովը տեղի կունենա Հայաստանի մայրաքաղաք Երևանում:

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետը Հայաստանում ֆրանկոֆոնիայի գագաթաժողովին ընդառաջ կազմակերպել էր միջոցառում: Ֆրանսերեն լեզվով ինտելեկտուալ խաղի անցկացման նպատակը ֆրանսերեն լեզվի հետ շփումն էր, նաև Ֆրանսիայի և ֆրանսիական մշակույթի մասին ուսանողների գիտելիքների զարգացմանը նպաստելը:

Դասախոս Միրա Կարապետյանը շնորհավորեց ներկաներին հետաքրքիր ձեռնարկի կազմակերպման առթիվ, ապա ներկայացրեց Ֆրանսիայի դրոշի գույները խորհրդանշող թիմերի անունները՝ կապույտ, սպիտակ, կարմիր:

Ներկաները դիտեցին Ֆրանկոֆոնիային նվիրված ֆիլմ, տեղեկացան ֆրանկոֆոնիայի անդամ երկրների ու խորհրդանիշների մասին, ֆրանսիացի հանրահայտ երգչուհի Միրեյ Մատիեի կատարմամբ ըմբոշխնեցին երկրի հիմնը:

«Հայաստանի հանդեպ ամենաջերմ երկիրը և եվրոպական քաղաքակրթության օրրանն է Ֆրանսիան»,- ասաց ֆակուլտետի դեկան Տիգրն Միքայելյանը՝ մատնանշելով ուսանողների համընդհանուր ոգևորությունը:

➢ 2